ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Արմինե Միրզոյան, ՀՀ ֆինանսների նախարարության բյուջեների կատարման հաշվետվությունների վարչության վերլուծության և ոչ ֆինանսական հաշվետվությունների բաժնի գլխավոր մասնագետ.

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Դուշանբե (Տաջիկիստանի Հանրապետություն), 2025 թվականի մայիսի 13-ից մինչև մայիսի 15-ը:

3. Հրավիրող կողմը.

Համաշխարհային բանկ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Հանրային ծախսերի կառավարման գործընկերային ուսուցման ցանցի (PEMPAL) կողմից կազմակերպվող բյուջետային պրակտիկայի համայնք (BCOP) 2025 թվականի տարեկան լիագումար հանդիպման նպատակն էր բյուջետային պրակտիկայի համայնք անդամ երկրներին հնարավորություն ընձեռել դիտարկել և քննարկել բյուջետավորման ոլորտի առաջնահերթ թեմաները, ինչպես նաև պլանավորել բյուջետային պրակտիկայի համայնքի գործունեությունը ապագայի համար: Ծանոթանալ Տաջիկստանի հանրապետության պետական ֆինանսների կառավարման համակարգին, բյուջետավորման ոլորտում իրականացված գործնական քայլերին և բարեփոխումներին: Ուսումնասիրել արդյունքների վրա հիմնված բյուջետավորման համակարգում առկա տեղեկատվության արդյունավետ օգտագործման մեթոդները՝ որոշումների կայացման նպատակով: Տեղեկանալ բյուջեի թափանցիկության արդիականացման և հանրային ներգրավվածության բարելավման վերաբերյալ նախաձեռնություններին: Ծանոթանալ բյուջեի կազմման նորարարական և գենդերային բաղադրիչներ ներառող մոտեցումներին, որոնք ուղղված են արդյունքների և ազդեցության վրա:

5. Քննարկված թեմաները.

PEMPAL BCOP 2025 թվականի տարեկան լիագումար հանդիպման ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները.

- Պետական ֆինանսների կառավարումը Տաջիկստանում, համակարգի վերանայում:
- Բյուջետավորման գործընթացը Տաջիկստանում պետական ֆինանսների կառավարման ոլորտի բարեփոխումներ
- Անդամ երկրների կողմից ներկայացված համառոտ տեղեկատվություն

բյուջետավորման ոլորտում առկա իրավիճակի մասին

- Բյուջեի թափանցիկություն և հանրային մասնակցություն
- Բյուջետային արդյունավետության բարձրացում, գործունեության արդյունքների մասին տեղեկատվության օգտագործումը ապացույցների վրա հիմնված որոշումներ կայացնելու համար
- Շնորհանդեսի ներկայացում և քննարկում
- Գենդերային ասպեկտների հաշվառում բյուջետավորման մեջ՝ գործողության և ազդեցության վրա հիմնված մոտեցում
- Բյուջետային պրակտիկայի համայնք գործունեության և գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկատվության թարմացում և հետագա գործունեության վերաբերյալ անդամների կարծիքների հավաքագրում
- Նիստի արդյունքների ամփոփում և եզրափակիչ ելույթներ

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ընդհանուր առմամբ բյուջետային պրակտիկայի համայնք (BCOP) 2025 թվականի տարեկան լիագումար հանդիպումը բավականին հետաքրքիր էր՝ հարուստ վերլուծություն-ներով և դրանց վերաբերվող տեղեկատվությամբ: Հանդիպման ընթացքում ներկայացուցիչների կողմից ներկայացվել են զեկույցներ և դասախոսություններ, որոնք ուղեկցվել են հարց ու պատասխանի ռեժիմով: Ներկայացված զեկույցներին և դասախոսություններին հաջորդել են մասնագիտական քննարկումներ, որոնց ընթացքում մասնակիցների կողմից ներկայացվել են իրենց երկրներում ծրագրային բյուջետավորման փորձը, առաջադրված խնդիրների լուծման հետ կապված առաջարկներ և կազմակերպվել քննարկումներ: Հանդիպման ընթացքում պահանջված շնորհանդեսի տեսքով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության բյուջեի պլանավորման և բյուջետային ծախսերի արդյունավետ օգտագործման գծով կիրառված բարեփոխումները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հանդիպման ընթացքում ձեռքբերված գիտելիքները լայն հնարավորություն ստեղծեցին ծանոթանալու միջազգային լավագույն փորձին, որոշ կարգավորումների մասով քննարկելու դրանք ընթացիկ աշխատանքներում կիրառելու նպատակահարմարության հարցը:

Ստորագրությունը, ամսաթիվը: **22.05.2025թ.**